

ԱՆԳԼԵՐԵՆԻ ՈՐՊԵՍ ԵՐԿՐՈՐԴ ՕՏԱՐ ԼԵԶԿԻ /ԳԵՐՄԱՆԵՐԵՆԻ ՀԻՄՔԻ ՎՐԱ/, ԺԱՍՆԱԿԱԶԵՎԵՐԻՆ ԾԱՆՈԹԱՑՄԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ

Նոր նյութի ծանոթացման նպատակն է քերականական միավորի ճշգրիտ կառուցվածքի ձևավորումը և իմաստա-կառուցվածքային կապի հաստատումը:

Քերականական նյութի բացատրությունը ենթադրում է իմաստի, ձևի և գործածության ծանոթացում: Այս փուլում տեղի է ունենում կողմնորոշիչ հիմքի ստեղծում: Իմաստը բացատրելիս դասախոսը ուղղում է ուսանողների ուշադրությունը էական կողմնորոշիչների վրա ցուցադրելով նաև նրանց կազմությունը: Քերականական երևույթին ծանոթացնելու հետ միաժամանակ անհրաժեշտ է սովորողներին տեղեկություն տալ բացասական փոխազդեցության հնարավոր դեպքերի մասին և ապահովել այդ տեղեկությունների յուրացումը:

Այսպիսով, քերականական երևույթների ծանոթացումը ներառում է երեք կարևոր օղակներ

1. նոր նյութի ցուցադրում.
2. հասկացածի ստուգման իրադրոժում.
3. նախնական ամրապնդում:

Քերականական նյութի ծանոթացման և նախնական ամրապնդման շնորհիվ ստեղծվում է սովորողի քերականական գործողության կողմնորոշիչ հիմք տարբեր իրադրություններում հմտության հետագա ձևավորման համար:

Անհրաժեշտ է նաև ապահովել քերականական կառույցի ըմբռնման ստուգումը և հետագա վերարտադրումը:

Արդյունավետ յուրացման համար նախատեսված նոր քերականական նյութին ծանոթացումը առավել հաճախ իրականացվում է ուսուցողական-խոսքային իրադրություններում, որոնք ներկայացվում են դասախոսի ղեկավարությամբ հետևյալ հաջորդականությամբ.

- Նոր քերականական կառույցի ընտրության վերաբերյալ որոշում:
- Կառույցի տեսողական և լսողական ընկալում:
- Խոսքային այնպիսի իրադրությունների ստեղծում, որոնք տիպական են նոր քերականական կառույցի գործածության համար:
- Կանոնի հայտնաբերում և ձևակերպում:
- Նոր քերականական կառույցի իմաստի ըմբռնման և նրա ճիշտ գործածության ստուգում օտար լեզվից մայրենի լեզու ընտրողական թարգմանության, պայմանական թարգմանության և այլ թեստերի միջոցով:

- Տարբեր իրադրություններում նոր քերականական կառույցի գործածություն:

Մենք փորձել ենք անգլերենի բայի ժամանակաձևերի համակարգի նյութի հիման վրա (Past Indefinite, Present Perfect ժամանակաձևերի օրինակով), կոնցենտրիկ եղանակով մշակել ու նախապատրաստել հայ ուսանողներին երկրորդ օտար լեզվի քերականության ուսուցումը: Մեր ընտրած կոնցենտրիկ եղանակով բայի ժամանակաձևերի համակարգի ուսուցման գործնական մեթոդիկայի մշակման համար անհրաժեշտ է պարզաբանել հետևյալ հարցերը.

- Ինչպես օգտագործել սովորողների լեզվական փորձը երկրորդ օտար լեզվի քերականությունը ուսուցանելիս:
- Ինչպես ներմուծել լեզվական նյութը, որպեսզի ապահովվի թե՛ նյութի ներկայացման համառոտությունն ու մատչելիությունը, թե՛ ձեռք բերված լեզվական փորձի արդիականացումը, թե՛ նյութի յուրացման արդյունավետությունը:
- Ինչպես կազմակերպել միաժամանակ ներմուծվող լեզվական նյութի յուրացումը, որի նպատակն է խոսքային քերականական մեխանիզմների ավտոմատացումը:

Անգլերեն լեզվով բանավոր խոսքում բայի ժամանակային ձևերի գործածության հիմքն է կազմում անգլերենի բային բնորոշ իմաստային տարբերակիչ հատկանիշների ըմբռնումը, իմաստավորումն ու խմբավորումը: Օրինակ՝ Past Indefinite-ի և Present Perfect-ի դեպքում զուգադրության արդյունքում ի հայտ բերված համընկնումների և տարբերությունների վերլուծությունից ակնհայտ է դառնում, որ անգլերենի բայի ժամանակային ձևերի իմաստների ճիշտ ընկալման համար անհրաժեշտ է, որ սովորողները գիտակցեն և պարզաբանեն հայերենի և գերմաներենի համապատասխան քերականական երևույթները համատեքստում զուգադրելով անգլերենի բայի ժամանակաձևերի հետ: Հենց այդ զուգադրությունն է հիմք ծառայում քերականական նյութի հիմնական իմաստի յուրացման համար: Այստեղ վճռորոշ է նյութի միաժամանակյա ցուցադրումը: Ցուցադրումը պետք է ընդգրկի այսպես կոչված “ բաց համեմատություն” երեք լեզուներում, նմանություններն ու տարբերություններն ավելի ցայտուն դարձնելու նպատակով [Ա. Ախագիշվիլի]:

Սակայն, բացի քերականական երևույթների իմաստային պլանի յուրացումից, անհրաժեշտ է ապահովել նաև ուսումնասիրվող համակարգի արտահայտման պլանը: Այսպիսով, Past Indefinite և Present Perfect ժամանակային ձևերի ուսուցման նպատակով տարվող աշխատանքները կարող են ընթանալ երկու ուղիով

1. Տվյալ ժամանակաձևերի իմաստային և կառուցվածքային յուրահատկությունների ընկալումը, այդ թվում նաև համատեքստում:

2. Տվյալ ժամանակաձևերի գործածությունը տվյալ խոսքային իրադրության մեջ:

Ուսուցման առաջին փուլի իրագործումը ենթադրում է

ա. Սովորողների մայրենի լեզվում (հայերենում) և առաջին օտար լեզվում (գերմաներենում) ձեռք բերած լեզվական փորձի ըմբռնումն ու գիտակցումը:

բ. Անգլերենի Past Indefinite և Present Perfect ժամանակաձևերի իմաստային ծավալի տարբերակիչ հատկանիշների յուրացումը:

գ. Past Indefinite և Present Perfect ժամանակաձևերի ձևակազմության օրինաչափությունների յուրացումը համեմատելով դրանք գերմաներենի Imperfekt և Perfekt ժամանակաձևերի ձևակազմության օրինաչափությունների հետ:

Վերոհիշյալ ժամանակաձևերի իմաստի յուրացումը իրականացվում է հետևյալ կերպով անգլերենի Past Indefinite և Present Perfect ժամանակաձևերի խտացված ներմուծում՝ զուգադրելով վերոհիշյալ ժամանակաձևերը հայերենի և գերմաներենի բայի համապատասխան ժամանակային ձևերի հետ, այսինքն՝

ա. բացատրելով այն իմաստային բաղկացուցիչները, որոնք կազմում են երեք լեզուների համապատասխան ժամանակաձևերի իմաստը:

բ. վերլուծելով հայերենի և գերմաներենի այն քերականական համատեքստային հատվածները, որոնք համապատասխանում են, կամ չեն համապատասխանում անգլերենի բայի ժամանակաձևերին:

Այս ուղին ենթադրում է իմաստից դեպի ձև հաջորդականություն, ապահովելով գործածությունը բանավոր խոսքում, ինչպես նաև ընկալումը տեքստեր ընթերցելիս:

Պետք է նշել, որ իմաստի հետ կապված դժվարություններին ավելանում են նաև ձևի և գործածության հետ կապված դժվարություններ: Իմաստի յուրացման վերաբերյալ հաշվի ենք առնում հայերենի և գերմաներենի ազդեցությունը: Բացասական ազդեցությունը վերացնելու համար կատարվում է իրադրությունների վերլուծություն ճիշտ ժամանակաձևեր ընտրելու նպատակով:

Այսպիսով, մեր առաջարկած մոտեցումը (հաշվի առնելով օտար լեզուների դասավանդման մեթոդիկայում ձեռք բերած փորձը) նյութի կոնցենտրիկ ներմուծումը, ենթադրում է անգլերենի բայի սահմանական եղանակի չորս կերպաժամանակային խմբերի միաժամանակյա ներմուծում ներկա, անցյալ, ապառնի և անցյալ ապառնի ժամանակներում (Indefinite, Continuous, Perfect, Perfect Continuous խմբերը խոնարհվում են Present, Past, Future, Future in the Past ժամանակներում): Այնուհետև զուգադրում ենք վերոհիշյալ ժամանակաձևերը հայերենի և գերմաներենի բայի համապատասխան ժամանակային ձևերի հետ: Իմաստային տարբերությունը մի կողմից անգլերենի Past Indefinite և Present Perfect, մյուս կողմից հայերենի անցյալ կատարյալ, անցյալ անկատար, ներկա վաղակատար, անցյալ վաղակատար և գերմաներենի Imperfekt, Perfekt և Plusquamperfekt ժամանակաձևերի միջև առաջացնում է դժվարություններ Past

Indefinite և Present Perfect ժամանակաձևերի ուսուցման գործընթացում: Ուսանողներին տրվում է անհրաժեշտ տեղեկություն այն մասին, որ Past Indefinite ժամանակաձևին հայերենում համապատասխանում են անցյալ անկատարը, անցյալ կատարյալը և անցյալ վաղակատարը, իսկ գերմաներենում Imperfekt, Perfekt, Plusquamperfekt ժամանակաձևերը:

Յուրահատուկ դժվարություն է ներկայացնում Past Indefinite և Present Perfect-ի իմաստային տարբերակումը: Չնայած Present Perfect-ը ներկա ժամանակաձև է, սակայն արտահայտում է անցյալում կատարված գործողություն: Բրիտանական գրական անգլերենում Present Perfect-ը գործածության տեսակետից տարբերվում է Past Indefinite-ից: Գործնական քերականության դասագրքերում գործածության տարբերությունը բացատրվում է համատեքստի բառային ցուցիչներով: Օրինակ just-ի առկայության դեպքում գործածվում է Present Perfect, իսկ just now-ի դեպքում գործածվում է Past Indefinite: Օրինակ He has just come. He came just now. Այսինքն դեռ չավարտված ժամանակի պարագայական բառերը պահանջում են Present Perfect, իսկ անցյալի գիրկն անցած պահեր և ժամանակահատվածներ արտահայտող պարագայական բառերը պահանջում են Past Indefinite: Սա կարելի է ցուցադրել հետևյալ աղյուսակով [ըստ Ի.Ի. Կիտրոսկայայի, 1976]:

Spoken in the MORNING	Spoken in the AFTERNOON	Spoken in the EVENING
The morning is unfinished. Now (10 a.m.) This morning I have posted my letters I have bought some bread. I have telephoned Nick.	The afternoon is unfinished. Now (3 a.m) This afternoon. I have seen my friends. I have talked to Tom.	The evening is unfinished. Now (9 p.m) This evening. I have watched the news on TV.
The morning is finished This morning I posted my letters. I bought some bread. I telephoned Nick.	The afternoon is finished This afternoon I saw my friends. I talked to Nick.	_____

We use the Past Indefinite tense to describe finished events in the past.

Yesterday

7pm 8pm 9pm 10pm 11pm Today

X

X

started

finished

E.g. Yesterday I watched a great film on TV. It started at 8 p.m. and finished at 10.15 p.m.

We use the Present Perfect when we talk about our experiences in the past and do not mention the exact time. E.g. I have been to Italy.

Ուսանողներին բացատրվում է, որ Present Perfect-ը գտնվում է ներկա ժամանակաձևերի խմբում, քանզի այս ժամանակաձևում առավել ուժեղ է

արտահայտված կապը ներկա պահի հետ, իսկ Past Indefinite-ը գտնվում է անցյալ ժամանակաձևերի խմբում, այսինքն այս ժամանակաձևում խիստ արտահայտված է կապը անցյալ պահի հետ: Օրինակ I saw him yesterday. I translated the text two hours ago. I have just seen him. I have already translated the text.

Համեմատվում է հայերենում և գերմաներենում կապը անցյալի և ներկայի պահերի հետ ժամանակի մակբայների օգնությամբ. տարբերակիչ հատկանիշները ավելի ցայտուն դարձնելու համար: Օրինակ ես հենց նոր թարգմանել եմ տեքստը: Ես հենց նոր թարգմանեցի տեքստը: Երեկ ես տեսա նրան: Երեկ տեսել եմ նրան: Երեկ տեսել էի նրան:

Նույնն է նաև գերմաներենում: Անցյալ ժամանակի մակբայների հետ գերմաներենում կարող է գործածվել և՛ Imperfekt, և՛ Perfekt, և՛ Plusquamperfekt: Օրինակ Gestern habe ich dieses Buch gelesen. Gestern hatte ich dieses Buch gelesen. Gestern las ich dieses Buch.

Սխեմաներով ներկայացվում են անգլերենի, հայերենի և գերմաներենի համապատասխան ժամանակաձևերը: Սխեմաներից օգտվելը օգնում է սովորողներին բացահայտելու լեզվական երևույթների այն կողմերը, որոնց ուղղությամբ պետք է ընթանան նրանց գործողությունները: Սխեմաներում կիրառվում են երկրաչափական պատկերներ՝ նախադասության կառուցվածքը ներկայացնելու և նախադասություն կառուցելու համար:


Անգլերենի ժամանակաձևերի մեծ մասում մատուցումը նպաստում է նշված դժվարությունները վերացնելուն:

Կառուցվածքային առանձնահատկությունների յուրացման հիմնական հնարներն են վերոհիշյալ ժամանակաձևերի կառուցվածքի վերլուծությունը ըստ Indefinite-Perfect խմբերի, ինչպես նաև ձևակազմության կանոնի ընդհանրացված ձևակերպումը:

Past Indefinite Tense = Past Indefinite stem of regular and irregular verbs.

Present Perfect = have/has + Past Participle

Առանձնահատուկ ուշադրություն է դարձվում Past Indefinite ժամանակաձևում հարցական ձևի կազմությանը, քանի որ այն հատուկ դժվարություն է ներկայացնում ուսանողների համար: Անգլերենում Past Indefinite ժամանակաձևում պարզ բայական ստորոգյալի դեպքում հարցական ձևը կազմվում է ներմուծվող did օժանդակ բայով, որը դրվում է ենթակայից առաջ: Օրինակ




Գերմաներենում հարցական ձևը կազմվում է շարադասության փոփոխությամբ՝ ստորոգյալը դրվում է ենթակայից առաջ: Հայերենում հարցական ձևը կազմվում է հնչերանգի միջոցով:

Did Tom's elder brother work at the factory two years ago? Arbeitete Tom's ältester Bruder vor zwei Jahren in der Fabrik? Թոմի ավագ եղբայրը աշխատո՞ւմ էր ֆաբրիկայում երկու տարի առաջ:

Գերմաներենում և անգլերենում հարցական ձևի կազմության նմանություն կա բաղադրյալ անվանական ստորոգյալների դեպքում, երբ հարցական ձևը երկու լեզուներում էլ կազմվում է օժանդակ բայի միջոցով:

The weather was fine yesterday. Was the weather fine yesterday?
Das Wetter war gestern schön. War das Wetter gestern schön?

Անգլերենում Past Indefinite ժամանակաձևում պարզ բայական ստորոգյալների դեպքում ժխտական ձևը կազմելիս not ժխտական մասնիկը ավելանում է did օժանդակ բային, իսկ գերմաներենում nicht օժանդակ բայը ավելանում է հենց ստորոգյալին:



I did not see him yesterday.

Tom's elder brother did not (didn't) work at the factory two years ago. Tom's ältester Bruder arbeitete nicht vor zwei Jahren in der Fabrik. Թոմի ավագ եղբայրը չէր աշխատում ֆաբրիկայում երկու տարի առաջ:

Ժխտական ձևի կազմության նմանություն կա բաղադրյալ անվանական ստորոգյալների դեպքում, երբ not (nicht) ժխտական մասնիկը ավելանում է օժանդակ բային:

Հայերենում չ ժխտական մասնիկը կարող է ավելանալ և՛ ստորոգյալին, և՛ օժանդակ բային: Օրինակ երեկ ես նրան չտեսա: Նա չէր աշխատում ֆաբրիկայում երկու տարի առաջ:

It was not (wasn't) cold yesterday.
Es war nicht kalt gestern. Երեկ ցուրտ չէր:

Present Perfect և Perfekt ժամանակաձևերում հարցական և ժխտական ձևերի կազմությունը նման է: Հարցական ձևը կազմվում է have, haben կամ sein օժանդակ բայերի միջոցով, իսկ ժխտական ձևում not (nicht) ժխտական մասնիկները ավելանում են հենց նշված օժանդակ բայերին:

I have not read this book. Ich habe dieses Buch nicht gelesen.
Ես այս գիրքը չեմ կարդացել:

Կառուցվածքային առանձնահատկությունների յուրացման հիմնական հնարներից է նաև տվյալ ժամանակաձևերի ուսուցումը վարժությունների միջոցով, որոնց նպատակն է սովորեցնել

ա. տվյալ ժամանակաձևերի իմաստը.

բ. տվյալ ժամանակաձևերի կառուցվածքը.

գ. ձևույթների հնչյունական պատկերը .

դ. արտասանական առանձնահատկությունները որպես խոսքային գործունեության անհրաժեշտ օղակ:

Past Indefinite-ի և Present Perfect-ի այս ուղիով ներմուծումը կողմնորոշիչ հիմք է ստեղծում:

Քերականական նյութին ծանոթացումը պետք է զուգակցվի վարժանքի հետ, քանզի կարողությունների և հմտությունների ձևավորումը տեղի է ունենում միաժամանակ, սկսած նոր նյութի ընկալման պահից (Фаломкина С.К., 1975.)

Աշխատանքի հաջորդ փուլը ուղղված է խոսքային գործունեության ընթացքում վերոհիշյալ ժամանակաձևերը տիրապետելուն: Ներմուծվող նյութի արդյունավետ վարժանքը կարելի է ապահովել արդյունարար (պրոդուկտիվ) և ընկալողական (ռեցեպտիվ) խոսքային կարողությունների զուգահեռ զարգացման պայմաններում: Ժամանակաձևերի ամրապնդմանն ու վարժանքին զուգահեռ ընթերցանության ընթացքում կազմակերպվում է այդ ժամանակաձևերի կիրառումը բանավոր խոսքում, որը ներառում է վարժությունների երկու ամբողջական շարք. ա. վարժություններ, որոնք ուղղված են ասույթի ձևավորման մեխանիզմի մշակմանը, բ. վարժություններ, որոնք սովորեցնում են ինքնուրույն կիրառել վերոհիշյալ ժամանակաձևերը:

Խոսքային գործունեության ընթացքում (մենախոսություն և երկխոսություն), ժամանակային ձևերի ազատ գործածությունը ենթադրում է անհրաժեշտ ավտոմատիզմների ձևավորվածություն, որի արդյունքում ուսանողների ուշադրությունը հնարավոր է բնեղել ասույթի բովանդակության վրա: Բուհական պայմաններում ամենակարևոր հնարներից է քերականական կառուցվածքների իմաստավորման համար թարգմանական լեզվական միջոցների կիրառումը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ստվածատրյան Մ.Գ., Օտար լեզուների դասավանդման մեթոդիկա, Եր., "Լույս", 1985:

2. Ստվածատրյան Մ.Գ., Գերմաներեն լեզվի IV և V դասարանների դասագրքերի մեթոդական ուղեցույց, Եր., "Լույս", 1983:

3. Алхазиивили А.А., Основы овладения устной иностранной речью. М. Изд.—во "Просвещение". 1988.

4. Богородицкая В.Н., Обучение второму иностранному языку в вузе. (на материале видовременных форм английского глагола). Автореферат на соискание ученой степени к.и.н. М. Изд.—во "Высшая школа". 1974.

5. Kitrosskaya I.I., English as a Second Foreign Language. Moscow. Higher School Publishing House. 1976.

6. Фаломкина С.К., Лившиц О. Я., Ознакомление учащихся с новым языковым материалом при обучении устной речи и чтению. Методическое пособие для студентов. М. 1975.